ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Տասնամյակներ շարունակ էլեկտրաէներգետիկան դիտվել է որպես բնական մենաշնորհ և խստորեն կարգավորվել պետության կողմից: Այն կառավարվել է որպես ուղղաձիգ ինտեգրացված համակարգ, որում արտադրող տեղափոխող և բաշխող օղակները գործել են միևնույն կազմակերպությունում պլանավորման և ռեսուրսների բաշխման գործառույթների կենտրոնացմամբ: Նույնիսկ զարգացած շուկայական տնտեսություններ ունեցող երկրներում, էլեկտրաէներգետիկան հանդիսացել է պետական սեփականություն և հաճախ վերածվել նրա մակրոտնտեսական և սոցիալական քաղաքականության իրականացման գործիքի: Վերջինս բացասաբար անդրադարձավ նրա արդյունավետ գործունեության վրա:

1970-ական թվականներին, արդեն, որոնվում էին այդ համակարգում կառավարման և կարգավորման նոր մոտեցումներ, որոնք էլ սկիզբ դրեցին վերջին քսան տարիների ընթացքում տեղի ունեցող բարեփոխումների ալիքին:

Բարեփոխումների առաջին փորձը կատարեց Մեծ Բրիտանիան, ներդնելով մրցակցություն արտադրողների և իրացնողների միջև և մասնավորեցնելով էլեկտրաէներգետիկ ամբողջ համակարգը: Այնուհետև բարեփոխումները շարունակվեցին Ավստրալիայում, Լատինական Ամերիկայի երկրներում, ներկայումս իրականացվում են Միացյալ Նահանգներում, Եվրոմիության և ԱՊՀ երկրների մեծ մասում: Զարգացման տարբեր փուլերում գտնվող այս երկրների էլեկտրաէներգետիկ համակարգում կատարվող բարեփոխումները ունեն միևնույն նպատակները, որոնցից հիմնականներն են՝

- Համակարգում իրականացվող գործառնությունների և ներդրումների արդյունավետության բարձրացումը

- Սակագնի կառուցվածքի կատարելագործումը, որը նպաստում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանն ու էլեկտրաէներգիայի խնայողությանը
- Համակարգում ոչ պետական մասնաբաժնի մասնակցության մեծացումը:

Այս նպատակներն իրականացվում են համակարգում մրցակցության ներդրմամբ, նրա մասնավորեցմամբ և կարգավորման նոր մոտեցումների կիրառմամբ: Վերջիններս, իրենց հերթին, պահանջում են կառուցվածքային փոխհարաբերությունների վերափոխում և շուկայում գործունեության կանոնների մշակում:

Կառուցվածքային փոփոխությունների իրականացում: Որպես օրինակ՝ փոփոխություն, բոլոր երկրներում մրցակցության ներդրումից և մասնավորեցումից առաջ իրականացվում են կառուցվածքային փոփոխություններ, այդ թվում՝

1. էլեկտրաէներգիայի ինտեգրացված համակարգի տարանջատում արտադրող, հաղորդող և բաշխող օղակների:
2. Համակարգի կարգավորումն իրականացնող անկախ մարմնի ստեղծում, որը հաշվետու չէ կառավարությանը և կարգավորումն իրականացնում է ելնելով էլեկտրաէներգետիկայի և ոչ թե կառավարության առջև դրված խնդիրներից:

Մրցակցության ներդրում և շուկայի մոդելի ընտրություն: Բարեփոխումների սկզբնական փուլում կառուցվածքային նշված փոփոխությունները թույլ են տալիս համակարգում աստիճանաբար ներդնել մրցակցություն և ներգրավել մասնավոր ներդրողներ: Ճիշտ ներդնելու դեպքում մրցակցությունը կարող է՝

- թեթևացնել կարգավորող մարմնի վերլուծական և տեղեկատվական բեռը, դրանով բարձրացնելով վարչական կառավարման արդյունավետությունը,
- կատարելագործել առաքման գրաֆիկների կազմման և կարգավարման ընթացակարգերը՝ այդպիսով բարձրացնելով համակարգի կարճաժամկետ կառավարման արդյունավետությունը,

- ապահովել շարժառիթներ ընթացիկ գործառնական ծախսերի կրճատման, ինչպես նաև բավարար արտադրական հզորությունների առկայության համար,
- կատարելագործել նոր արտադրող կայանների ընտրության, կառուցման գործընթացը դրանով մեծացնելով դինամիկ արդյունավետությունը,
- մեծացնել էլեկտրաէներգիայի գնագոյացման և սպառման արդյունավետությունը, նպաստելով ռեսուրսների ճիշտ բաշխմանը:

Այնուամենայնիվ, մրցակցության ներդրման համար անհրաժեշտ են մի քանի նախապայմաններ, որոնց բացակայության դեպքում դրա ներդրումը աննպատակահարմար է: Այդ նախապայմաններից հատկապես կարևորվում են շուկայի ծավալները, էլեկտրաէներգետիկայի ենթակառուցվածքի նկատմամբ բաց, ոչ խտրական հասանելիությունը և էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի շուկայի կանոնների առկայությունը:

Այն երկրներում, որտեղ գործում են ընդամենը մեկ կամ մի քանի մատակարարներ, մեկ մատակարարի կողմից շուկայի և գնագոյացման վրա ազդելու կամ այն վերահսկելու հավանականությունը շատ բարձր է: Այդ պատճառով, պետության կողմից կարգավորումը մրցակցությամբ փոխարինելու գործընթացը այստեղ պետք է կատարվի աստիճանաբար, այնպես, որ դրա արդյունքում սպառողները չդառնան մենաշնորհների զոհ:

Նույնիսկ բավարար թվով գնորդների և մատակարարների առկայության դեպքում՝ մրցակցության ներդրման տեսանկյունից կարևոր խնդիր է շուկայական ենթակառուցվածքի նկատմամբ հասանելիության ապահովումը: էլեկտրաէներգետիկ համակարգում շուկայական ենթակառուցվածքը բարձրավոլտ և ցարդրավոլտ ցանցերն են: Եթե մատակարարներից միայն մի քանիսը ունենան ազատ հասանելիություն դրանց նկատմամբ, ապա մրցակցության ներդրումը նրանց միջև կարող է վտանգվել:

Շուկայական ենթակառուցվածքի նկատմամբ բաց հասանելիության ապահովման հետ մեկտեղ, միաժամանակ անհրաժեշտ է մշակել նրանից օգտվելու, կամ ինչպես ասում են, մեծածախ շուկայի կանոններ:

Տարբեր երկրներ որդեգրել են մեծածախ շուկայի տարբեր կանոններ: Այս տարբերությունները պայմանավորված են շուկայի չափսերով, նրա կառուցվածքով ու ֆիզիկական բնութագրիչներով: Դիտարկենք մեծածախ շուկայի երկու հիմնական տեսակները:

1. Աճուրդային շուկաներ: Էլեկտրաէներգիայի ամենամրցակցային շուկաներն աշխատում են աճուրդային սկզբունքով, որում էլեկտրաէներգիան տարբեր ժամերի իրացվում է տարբեր գներով՝ կախված տվյալ պահին պահանջարկի մեծությունից հետևաբար և օգտագործված հզորությունների ու ռեսուրսների ինքնարժեքից: Շուկայի այդպիսի օրինակ կարող է հանդիսանալ Անգլիայի և Ուելսի էներգետիկ միավորումը, որում էլեկտրաէներգիայի վաճառքը իրականացվում է արտադրողների կողմից մեկ օր առաջ միավորմանը ներկայացված հայտերի և օրվա յուրաքանչյուր կես ժամվա պահանջարկի հիման վրա: Կարգավարը ամփոփում է հայտերը և աճողական կարգով կառուցում հաջորդ օրվա առաջարկի կորը՝ առաջնահերթությունը տալով այն արտադրողներին, որոնք պատրաստ են մատակարարելու ավելի էժան էլեկտրաէներգիա: Օրվա յուրաքանչյուր կես ժամվա համար արտադրողների ներկայացրած հայտերի և սպառողների պահանջարկի հիման վրա ձևավորվում է առանձին սակագին: Սակագինը արտացոլում է տվյալ կես ժամվա ընթացքում ամենաթանկ մատակարարող արտադրողի առաջարկած գինը: Ընդ որում, այդ նույն սակագնով, նշված կես ժամվա ընթացքում վճարվում են բոլոր արտադրողները՝ չնայած, որ նրանց առաջարկած սակագները ավելի ցածր են եղել: Այն արտադրողները, որոնք բարձր գին առաջարկելու հետևանքով տվյալ կես ժամվա ընթացքում կարգավարից մատակարարման հրահանգ չեն ստացել, չեն վճարվում:

Մի շարք այլ երկրներ նույնպես ընդունել են աճուրդային շուկայի այս մոդելը՝ նրանում կատարելով որոշակի փոփոխություններ: Ավստրալիայի Վիկտորիա նահանգում օգտագործվում է նմանատիպ համակարգ՝ աճուրդների երկու փուլով, որը սպառողներին և արտադրողներին թույլ է տալիս ստանալ նախնական տեղեկատվություն և վերանայել իրենց որոշումները: Նորվեգիան նույնպես ընդունել է աճուրդային մոդելը, կատարելով նրանում այնպիսի

փոփոխություններ, որոնք բխում են հիդրոէներգետիկ ռեսուրսներով հարուստ համակարգի առկայությունից:

Չնայած որոշակի տարբերություններին, ուշադրության է արժանի այն փաստը, որ աճուրդային մոդելից հաջողությամբ օգտվող բոլոր երկրներն ունեն էլեկտրաէներգիայի մեծ առաջարկ և պահանջարկ, հաշվառքի կատարելագործված համակարգեր, համակարգչային ապահովում և մեծ փորձ առևտրային հարաբերություններում, որը, ցավոք սրտի, դեռևս, բնութագրական չէ Հայաստանի համար:

2. «Երրորդ կողմի հասանելիության» մոդելներ կամ զուգահեռ շուկաներ: Որոշ երկրներ, մինչև կառուցվածքային բարեփոխումները, ունեցել են ուղղաձիգ ինտեգրացված էլեկտրամատակարար ընկերություններ և մրցակցության ներդրումը սկսել են որոշակի արտադրողների կամ մանրածախ իրացնողների՝ բարձրավոլտ և ցածրավոլտ ցանցի նկատմամբ հասանելիության ապահովման միջոցով: Այս մոտեցումը մինչ վերջերս օգտագործվել է ԱՄՆ-ում: Ժամանակին ԱՄՆ-ն ունեցել է էլեկտրաէներգիայի մատակարարման ուղղաձիգ ինտեգրացված համակարգեր, սահմանափակված աշխարհագրական որոշակի տարածքներում: 1970-ականն թվականներին ներդրվեց երրորդ կողմի հասանելիության մոդելը՝ համակարգում լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով: Միաժամանակ, այն հանդիսացավ զուգահեռ շուկա, որը թույլ չէր տալիս, որպեսզի ուղղաձիգ ինտեգրացված ընկերությունները չարաշահեն իրենց մենաշնորհային դիրքը:

Եվրոպական Միությունը ընդունել է կարգավորման նոր կանոններ՝ որոնք ուղղված են եվրոպական էներգետիկ շուկաներում մրցակցության մեծացմանը: Այս կանոնները նախատեսում են էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի երկու տարբեր մոդելներ: Առաջին մոդելը համընկնում է աճուրդային մոդելին, երկրորդը՝ »միակ գնորդ մոդելին«, որում փաստորեն սպառողների մեծ մասը օգտվում են իրենց տարածքը սպասարկելու բացառիկ իրավունք ունեցող ընկերություններից, սակայն »երրորդ« կողմին թույլ է տրվում սպասարկել սպառողների որոշ խմբերի՝ անկախ նրանց գտնվելու վայրից:

Եվրոպական երկրների մեծ մասը, որոնք նախկինում ունեցել են ուղղաձիգ ինտեգրացված համակարգեր, ընտրել են բարեփոխումների երկրորդ մոդելը:

«Երրորդ կողմի հասանելիության» մոդելը ընտրող երկրները հիմնականում ունենում են գերիշխող ինտեգրացված համակարգեր, թույլ զարգացած առևտրային արարողակարգեր և փորձ, ինչպես նաև հաշվառքի ոչ կատարյալ համակարգեր:

Մասնավորեցում: Մասնավորեցումն էլեկտրաէներգետիկ համակարգում արդեն ավելի քան տասնամյակ է ձեռք է բերել միջազգային միտում: Որոշ երկրներում, օրինակ Միացյալ Նահանգներում այն եղել է մասնավորեցված նույնիսկ մինչև այդ ժամանակահատվածը: Այնուամենայնիվ մինչև 80-ական թվականները մասնավորեցումը էլեկտրաէներգետիկ համակարգում բացառություն էր և ոչ թե կանոն:

էլեկտրաէներգետիկ համակարգերի մասնավորեցմամբ երկրները հետևում են մի քանի նպատակներ, որոնցից հիմնականներն են՝

- առևտրային կողմնորոշում ունեցող կառավարման համակարգի ներդրումը, որը բերում է արդյունավետության բարձրացման
- պետական բյուջե մուտքերի ապահովումը
- պետական բյուջեից էլեկտրաէներգետիկ սեկտորին կապիտալ ներդրումների համար գումարների հատկացումից խուսափումը:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներին բնորոշ են բազմաթիվ տնտեսական հիմնախնդիրներ, որոնցից են հիպերինֆլյացիան, տնտեսական աճի ցածր տեմպերը, արտաքին պարտքի մեծացումը, օրեցօր վատթարացող տնտեսական ենթակառուցվածքները՝ այդ թվում էլեկտրաէներգետիկ ենթակառուցվածքը: Սղաճը հնարավոր է զսպել կոշտ դրամավարկային քաղաքականությամբ, որը սակայն սահմանափակում է տնտեսական աճը: Մասնավորեցումը այն լուծումներից մեկն է, որը նվազեցնում է արտաքին պարտքը, հնարավորություն է ստեղծում ենթակառուցվածքի բարելավման համար և կարող է իրականացվել դրամավարկային կոշտ քաղաքականության պայմաններում: Այս է պատճառը, որ անցումային տնտեսություն ունեցող երկրներում Համաշխարհային Բանկը որպես վարկավորման նախապայման առաջ է քաշում էլեկտրաէներգետիկ համակարգի մասնավորեցման խնդիրը:

էլեկտրաէներգետիկ համակարգի բարեփոխումները Հայաստանում: Հայաստանում էլեկտրաէներգետիկ համակարգի բարեփոխումները սկսվեցին 1997թ «Էներգետիկայի մասին» օրենքի ընդունմամբ: Կառավարման ուղղածիգ ինտեգրացված համակարգը, որը ղեկավարվում էր Հայէներգոյի կողմից տարանջատվեց առանձին արտադրող-տեղափոխող-բաշխող օղակների: Ստեղծվեց համակարգի կարգավորումն իրականացնող անկախ մարմին էներգետիկայի հանձնաժողով, որը սահմանում է էլեկտրաէներգիայի սակագները նշված օղակների և սպառողների տարբեր խմբերի համար:

Օրենքը, սկզբունքորեն թույլ էր տալիս էլեկտրաէներգիայի ուղղակի վաճառք արտադրողներից վերջնական սպառողներին, կամ բաշխիչ ընկերություններին, շրջանցելով »միակ գնորդին«, որի դերը փաստորեն կատարում է «Հայէներգո» ՊՓԲԸ-ն: Իրականում, սակայն, համակարգում գործող ընկերությունների պետական լինելու և պետության ակտիվ միջամտության շնորհիվ էլեկտրաէներգիայի վաճառքը իրականացվում էր և շարունակվում է իրականացվել «Միակ Գնորդ» մոդելով:

Հայէներգոն արտադրող ընկերություններից էլեկտրաէներգիան գնում է հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով, մատակարարում է այն բաշխիչ ցանցերին, յուրաքանչյուրի համար սահմանելով առանձին սակագին, որոնք էլ իրենց հերթին մատակարարում են վերջնական սպառողներին՝ կրկին հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով: Չնայած տարանջատված այս համակարգին, Հայէներգոն և էներգետիկայի նախարարությունը շարունակում են պահել կառավարման իրենց կենտրոնական դերակատարումը: Մասնավորապես սպառողներից հավաքագրված գումարները կուտակվում են Հայէներգոյի տարանցիկ հաշվում, որն էլ այնուհետև էներգետիկայի նախարարության հրահանգներով բաշխվում է համակարգի մասնակիցների միջև: Ավելին, ընկերությունների տարեկան բյուջեները նույնպես հաստատվում են նախարարության կողմից: Մի քանի տարիների կտրվածքով թվային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆինանսական միջոցների բաշխումը կատարվում է բավականին անհավասարաչափ, որը բացասաբար է անդրադառնում նրանց կառավարման

մասնավորապես պլանավորման և ֆինանսական միջոցների տնօրինման հետ կապված գործառույթների վրա:

Հայէներգոյում են կենտրոնացված նաև արտադրողների հետ պայմանագրեր կնքելու և համակարգի տեխնիկական կարգավարման գործառույթները:

Ազգային ժողովի կողմից 2001թ ընդունվեց էներգետիկայի մասին նոր օրենքը, որը, ի տարբերություն նախկին օրենքի, այլևս ուղղակիորեն չի կարգավորում արտադրողների, տեղափոխողի, բաշխիչ ընկերությունների և վերջնական սպառողների միջև էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի կանոններ: Օրենքը դրանք թողնում է շուկայի կանոններին, որոնք պետք է մշակվեն հանձնաժողովի կողմից:

Հայաստանի էլեկտրաէներգետիկ շուկայի առանձնահատկությունները հակված են մատնանշելու շուկայի կանոնների երկրորդ՝ *երրորդ կողմի հասանելիության* մոդելի ընտրությանը: Համաձայն այս մոդելի, արտադրողների կողմից սահմանված սակագները կվերահսկվեն ոչ թե հանձնաժողովի, այլ նրանց միջև ներդրվող մրցակցության կողմից: Հայէներգոն պարբերաբար կկազմակերպի մրցույթ, որի հիման վրա էլ կկնքի պայմանագրեր արտադրողների հետ: Միաժամանակ սպառողների որոշակի խմբի (նպատակահարմար է խոշոր սպառողներին), հնարավորություն կտրվի ուղղակի պայմանագրեր կնքել այն արտադրող հզորությունների համար, որոնք ներառված չեն Հայէներգոյի և արտադրող ընկերությունների միջև մրցույթի արդյունքում կնքված պայմանագրերում: Այսպիսով կձևավորվի զուգահեռ շուկա, որը կստիպի արտադրողներին հնարավորին չափ բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը և համակարգը սպասարկել նվազագույն ծախսերով:

Ի տարբերություն առաջարկվող մոդելի, ներկայումս Հայաստանում արտադրող ընկերությունների սակագները հաստատվում են ելնելով նրանց ծախսերից: Ինքնարժեքի հիման վրա կարգավորման այս մոտեցումը արտադրող ընկերությունների համար չի ստեղծում բավարար շարժառիթներ գործունեության արդյունավետության բարձրացման և ծախսերի կրճատման

համար: Մրցակցության ներդրումը կստիպի, որպեսզի նրանք հնարավորին չափ կրճատեն ծախսերը:

Հայաստանում այս մոդելի գործնական կիրառման և տեղայնացման առանձնահատկությունները հասկանալու նպատակով դիտարկենք մի քանի փաստեր: էլեկտրաէներգիայի 40% -ը արտադրվում է ՋԷԿ-երում, որոնց սակագինը բավականին բարձր է ՀԷԿ-երի և ատոմակայանի համար սահմանված սակագներից: Միանգամայն հասկանալի է, որ ատոմակայանի և ՀԷԿ-երի հետ՝ ելնելով համակարգի շահագործման անվտանգությունից, ինչպես նաև նրանց կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի հարաբերականորեն ցածր ինքնարժեքից, Հայէներգոն կկնքի պայմանագրեր ուղղակիորեն առանց վերջիններիս մրցույթի մասնակից դարձնելու, հետևաբար էներգետիկայի կարգավորումն իրականացնող հանձնաժողովը պետք է շարունակի վերահսկել այդ ընկերությունների կողմից սահմանվող սակագները: Միաժամանակ, պետք է նշել, որ այս ընկերությունները ազգային անվտանգության, ռազմավարական և բնապահպանական տեսանկյուններից ելնելով չպետք է մասնավորեցվեն:

Մնում է մրցակցության ներդրումը միայն ՋԷԿ-երի միջև, որոնք ներկայումս թերբեռնված են: Երևանի ՋԷԿ-ը, օրինակ, ունի 550 ՄՎՏ տեղակայված հզորություն, որից ներկայումս շահագործվում է միայն 50 ՄՎՏ հզորություն ունեցող արտադրող ագրեգատը: Մյուս արտադրող միավորները, որպես առանձին ընկերություններ մասնավորեցնելու դեպքում, կառաջանա աշխույժ մրցակցություն, քանի որ միմյանց միջև կմրցեն ոչ թե երեք այլ մի քանի ՋԷԿ-եր: ՋԷԿ-երին թույլ կտրվի նաև պայմանագրեր կնքել խոշոր սպառողների հետ, այդպիսով ստեղծելով զուգահեռ շուկա Միակ Գնորդի՝ այսինքն Հայէներգոյի նկատմամբ:

Հետագայում, նոր ավելի, արդյունավետ արտադրող հզորությունների տեղակայման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի բավարար պահանջարկի դեպքում, հնարավոր կլինի անցում կատարել շուկայի առավել մրցակցային մոդելների կիրառմանը: